ղեկավար կենտրոնը մի քիչ թեքուեց դէպի աջ, գրում էր «Հորիզոն»-ը*), և այդ բանում մեծապէս պատասխանատու են սոց.-դեմ. և սոց.-յեղափ. ֆրակցիաները... Ստեղծած դրութիւնը իսկական կօալիցիան է մեր իրականութեան, ուր հայ դեմոկրատիայի կուսակցութիւնն է Հ.Յ.Դաշնակցութիւնը և հայ բուրժուազիայի դրօշակիրը՝ ժողովրդական կուսակցութիւնը: Հայ դեմոկրատիայի և բուրժուազիայի կօալիցիան է, որ ստեղծուեց»:

Հասկանալի է, որ նոր կառավարութեան հետ կապւում էին մեծամեծ յոյսեր: Ենթադրւում էր նաև, որ Թիֆլիսից դէպի Հայաստան կը սկսի թարմ ուժերի, մտաւորական նոր գործիչների կենդանի հոսանք: Եւ, առաջին օրերին, նոյեմբ. 20-ին Երևան փոխադրուելով, ժողովրդական նախարարներն իրենք էլ գործի կոչն մեծ ոգևորութեամբ: Ս.Յարութիւնեանը պատրաստւում էր հիմքից վերակազմել արդարադատութեան գործը, պաշտօնի կոչել հմուտ իրաւագէտներ ու դատաստանական գործիչներ: Մ. Աթաբէկեանը հրապարակ դրեց աշխարհիկ ընդհանուր կրթութեան խնդիրը, խոստացաւ այժ տալ տեխնիկական դպրոցների բացման, էջմիածնի ճեմարանը տեղափոխել Երևան ու հետզհետէ վերածել համալսարանի, կրթութիւնը ատիճանաբար ազգայնացնել, պետական թատրոն, թանգարան ու գրադարան հիմնել, համախմբել մտաւորականութիւնը Հայաստանում: Մ. Բերբերեանը ձեռնարկեց պետական վերահսկողութեան գործի կազմակերպման՝ պետական վերահսկողութեան իբրև հիմք ընդունելով նախնական կամ փաստական հսկողութեան սկզբունքը: Ա. Լենֆիաջեանը յայտարարեց, թէ նոր տարուանից ներկայացնելու է կայուն պետական բիւդջէ և միջոցներ է ձեռք առնելու՝ ստեղծելու սեփական դրամ:

Ոգևորութիւնը, սակայն, երկար չտևեց — հազիւ մի քանի շաբաթ: Եւ ահա սկսուեց ժողովրդական նախարարների փախուստը Երևանից, ուր կեանքի պայմանները շատ էին ծանր սև հացի, յատակի վրա քնելու և ոչիլի չվարժուած մարդկանց համար: Կառավարութեան կազմութիւնից երկու շաբաթ չանցած, կուսակցական ինչ որ ներքին տարաձայնութեան հետևանքով, հրաժարական տուեց ու հեռացաւ հանրային կրթութեան նախարար Մ. Աթաբէկեանը. նրա տեղը անցաւ Գ. Մելիք-Ղարագէոզեանը: Քիչ յետոյ, պաշտօնական գործով, մեկնեց պարենաւորման նախարար Լ. Ղուլեանը և այլևս չվերադարձաւ. Թիֆլիսում պաշտօն ստացաւ հայկական պարենաւորման հիմնարկութեան մէջ: Ղուլեանի նախարարութիւնն էլ ստանձնեց Ս. Յարութիւնեանը, որը շուտով նոյնպէս գնաց Թիֆլիս՝ իր հերթին պաշտօնակատար նշանակելով Գ. Մելիք-Ղարագէոզեանին: Այսպիսով, ստեղծուեց մի դրութիւն, երբ Հայաստանը ունէր երեք պարենաւորման նախարար և ո՛չ մի պարենաւորում: Մի հանգամանք, որ ի հարկէ, վնասում էր կառավարութեան հմայքին:

Կօալիցիոն կառավարութեան համար անուղղելի հարուած եղաւ և Պաչ. Կարճիկեանի մահը նոյեմբ. 14-ին: Նա սպանուեց իր կուսակցական ընկերոջ՝ սպայ Եգոր Տէր-Մինասեանի ձեռքով, երբ նախարարական առանձնասենեա-

*) Ս. Մասուրեան, «Հորիզոն», 10 նոյ., 1918թ.